ՔՍԱՆԵԼՈՒԹԵՐՈՐԴ — ՏԱՐԻ — ԹԻՒ 2250 — ՈՒՐԲԱԹ — 9 — ՓԵՏՐՎԱՐ — 1879 — Ն. Տ. — 21 — ՓԵՏՐՎԱՐ

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՏՄԱՆԴ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 Մէճ.
» » Գաւառաց » 10 Մէճ.
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 4 Մէճ.
» » Գաւառաց » 5 Մէճ.
Օտար երկիրներու » 50 Ֆր.

Փանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ, երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։

Իւրաքանչիւր թիւ 2 ղրշոց թուղթ.

ՊԱՏՄԱՆԴ

Դուրս գնացած լրագրաց ճանրու ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիր—Ցնորէնին պիսի ուղղի, Ղալաթիա Սանտրքճըլար Ճասատէսի թիւ 198, Նօրօխան, Մասիսի գրասենեակը։

Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

Զտպուած նամակ, յօդուած, և ետ չեն տրուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 9 ՓԵՏՐՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիոյ և Ռումանիոյ միջև յուզուած Արապ — Թապիասի խնդրոյն լրագիրք ոմանք չափազանցութիւն տալով, այնպէս ներկայացուցին իբր թէ երկու կառավարութեանց մէջ կռիւ մը ծագելու վրայ է։ Սառնութեան նայելով, երկու կառավարութեանց յարաբերութիւնները ցըրտացած են այս խնդրոյն պատճառաւ, բայց զինու զօրութեամբ կռիւ մ'անհաւանական է։ Պէրլինի վեհաժողովը Տօպրուճայի սահմանը Սիլիսթրէի Արևելեան կողմն դծուելու որոշումտուած էր, գծման գործն Եւրոպական յանձնախորհրդի մը թողով։ Յանձնախորհրդին մեծագոյն մասը Տօպրուճայի սահմանը Սիլիսթրէի արևելեան կողմը կէս մղոն հեռիէն ոլորէց, որով յիշեալ բերդին ամրութիւններէն հոչակաւոր Արապ-Թապիան Ռումանիական հողին վրայ կը մնար։ Ռուսիոյ երեսփոխանը բողոքեց, և խնդիրը Կ. Պոլսոյ դեսպաններուն ներկայել, կամ վերաքննել և կամ նոր յանձնախորհուրդ մը կազմել առաջարկեց, բայց 'ի զուր։ Նոյն միջոցին Ռումանիոյ կառավարութիւնն յանձնախորհրդին որոշման գործադրութիւնն իւր ձեռքն առնելով, աճապարանօք և դուցէ սխալմամբ վարուեցաւ, քանզի Արապ-Թապիայի վրայ զօրք զրկեց, և հոն գտնուող սակաւաթիւ Ռուսերը ետ քաշուելու պարտաւորեց։ Ահա Ռուսիոյ և Ռումանիոյ միջև յարաբերութեանց կրքոտ կերպարանք մ'առնլուն պատճառն այս դէպքն եղած է, բայց կարգադրութիւնն անյուսալի չէ։ Պէրլինի դաշնագրութեան համեմատ՝ Դանուբի բերդերը պիտի քակուին, ուստի կրնայ ըսուիլ թէ Սիլիսթրէ ոչ ևս կարևորութիւն կ'ունենայ. այսու ամենայնիւ քաղաքէն կէս մղոն հեռի պատերազմական դիրքի մը Ռումանիոյ ձեռք մնալն անպատեհ կը համարուի. և կը կարծուի թէ սահմանը գծող յանձնախորհուրդը "Սիլիսթրէի արևելեան կողմը կէտ" մը սահման որոշելու համար դաշնագրին ըրած տրամադրութիւնը խիստ հեռի տարեր է։ Իսկ Ռումանիա կ'առարկէ թէ Դանուբի ստորին կողմը ճախճախուտ լինելով՝ գետին վրայ կամուրջ շինելու անյարմար է, և Արապ-Թապիայի դիրքին պէտք ունի՝ Դանուբի վրայ կամուրջ շինելու համար։ Այսու ամենայնիւ անյուսալի չէ որ կամուրջը քիչ մը վարէն ձգելով այս խնդիրը տերութեանց որոշմամբ կարենայ կարգադրիլ՝ առանց վէճն աւելի մեծնալու։

Ռուսիոյ զինուորական յաջողութեանց վրայ Ռուսաց հպարտանալուն առաջքն առնլու համար, այս միջոցիս մեծ կամփոքը բարոյական հարուածներ կը տրուին, որոց մինէ ժամանակի պատճառաւ Եւրոպական տերութեանց կողմէն ձեռք առնուած խիստ միջոցներն։ Եւրոպա իրաւունք ունի անշուշտ այն սարսափելի պատուհասին դէմ որչափ կարելի է ինքզինք պահպանելու, սակայն Ռուս լրագիրք կը յայտարարեն թէ հիւանդութիւնն այնչափ սաստիկ չէ, թէ Գերմանիա և Աւստրիա այս առթիւ Ռուսիոյ վաճառականութիւնը կործանելու համար խստագին միջոցներ ձեռք առնլու մասին միացած են. թէ այս երկու տերութեանց բաղմագունդ զօրք Ռուսիոյ սահմանը պահելով անցուդարձն արգելուլը թշնամական դիտաւորութիւն մը կենթադրէ։ Թերևս այս խորհրդածութիւններն ալ նպաստեցին որ Ռուսիա փութաց Բ. Դրան հետ վերջնական դաշնագրութիւնը կնքելով Օսմանեան հողը պարպելու սկսիլ։ Քանի որ Բումէլիի դրաւումն երկարաձգէր, Ռուսիա հարկաւ մեծ տերութեանց առջև հաճելի դրից մէջ չպիտի գտնուէր, և հարկ եղաւ որ այս վիճակին վախճան տայ։ Միւս կողմանէ Գերմանիա և Աւստրիա Բըրլինի դաշնագրութեան Ե. Դ. յօդուածը ջնջելու համար, որով հիւսիսային Շլէզվիկ Բրուսիոյ կողմէն Ցանիմարքայի պիտի վերադառնար, նոր դաշնագրութիւն մը կնքեցին, և այսպէս երկու գերմանական պետութեանց մէջ անհամաձայնութիւն չմնալով, մէջերնին դաշնակցութիւն մը հաւանական կ'երեւէր որ կրնայ՝ եթէ հարկ լինի՝ Ռուսիոյ դէմ իսկ դառնալ։ Անուրանալի է սակայն որ Ռուսիա դիւանագիտական հեռատեսութեամբ վարուելով՝ այս վտանգներուն առաջքն առաւ, և քանի որ դաշնագրութիւնը գործադրելու սահմանէն դուրս չելնէ, Եւրոպիոյ կողմէն իրաւացի թշնամութեան պատճառ չմնար, և իւր ընելիք գործը Պուլղարները կը կատարեն։

• • •

ԵԼՄՏԱԿԱՆ ԵՐԲԱԿԻ ՊԱՏՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն Ե. Էջէ տես թիւ 2249)

Բ.

ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ 200 ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆՔԻ

Կայսերական կառավարութիւնն իւր արդի պիտոյից գործածելու համար, 200 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը կը կնքէ, որ հետևեալ դրէլխաւոր տրամադրութեանց և պայմանաց համեմատ պիտի գործադրի։

Յօդ. 1. Ներկայ փոխառութիւնն յանձն առնող դրամատերաց խմբակը վարը նշանակուած պայմանաժամերու մէջ Օսմանեան կառավարութեան պիտի հատուցանէ, կամ իւր հրամանաուրիշներու ձեռօք հատուցանել պիտի տայ 200 միլիոն ֆրանքի իրական դումարն։

Յօդ. 2. Սոյն 200 միլիոն ֆրանքի դումարը պիտի հատուցուի՝ ներկայ հրամանագրին վաւերանալէն և երկու կողմանց հաղորդուելէն ետքը մինչև մէկ ամիս 50 միլիոն ֆրանք վճարելով, մնացածն ալ անկէ ետքը դալիք երկու ամիսներուն մէջ ամիսը 75 հազար ֆրանք վճարելով պիտի հատուցուի։

Յօդ. 3. Հատուցուած դումարներուն փոխարէն և անոնց հետզհետէ հատուցուած միջոցին՝ Օսմ. կառավարութիւնն իրեն փոխ տրուած դրրամոց համապատասխան արժէքով արժեթուղթեր պիտի տայ փոխատուաց։ Սոյն արժեթուղթերը տարին 100ին 6 տոկոս կը բերեն, որ փոխատուին նշանակած տեղերը վեց ամիսն անգամ մը ոսկւով պիտի վճարի, և տարին 100ին 1 գլխավճար պիտի ունենան, որոյ դումարը վերը ցուցուած տոկոսի սակագնոյն համեմատ պիտի հաշուի։

Սոյն արժեթուղթերն 100ին 88ի հաշուով պիտի առնուին։

200 միլիոն ֆրանքի դումարն ամբողջապէս Օսմանեան կառավարութեան հատուցանել պէտք լինելով, յիշեալ զեղչի դումարն արժեթղթերով պիտի հատուցուի, այնպէս որ փոխառութեան անուանական դումարին վրայ յիշեալ զեղչի դումարն աւելցած պիտի լինի։

Յօդ. 4. Ներկայ 200 միլիոն ֆրանքի փոխառութեան և 3րդ յօդուածին մէջ տրամադրեալ տոկոսներով և գլխամասով դոյացած տարեկան դումարին կանոնաւորապէս վճարման յապահովութիւն և յերաշխաւորութիւն, Օսմանեան կառավարութիւնը ներկայ հրամանագրով նոր փոխառութեան արժեթղթատեարց կը յանձնէ առանձնաշնորհութեամբ և գրաւական առաջնութեամբ՝ տերութեան մաքսատանց և անուղղակի տրոց ամբողջ հասոյթն, որք կը պարունակեն ծխախոտը (տուրք և Ռէժի), աղահանքները, դրոշմներն, ոգելից ըմպելիքներն ու արհեստաւորական տուրքերը (բաթէնթա)։

Սոյն հասոյթներն ու տուրքերն այժմէն անկախ յանձնախորհրդոյ մը յանձնուած են, որոյ պաշտօնն է զանոնք մատակարարել կատարեալ իրաւասութեամբ, և գումարն ուղղակէս ներկայ փոխառութեան արժեթղթատեարց հատուցանել՝ մինչև որ սոյն փոխառութեան տոկոսներուն և գլխավճարին հարկ եղած տարեկան գումարը դոյանայ։

Յօդ. 5. Այս օրուան հրամանագրով հաստատեալ սոյն յանձնախորհուրդն անմիջապէս պաշտօնի պիտի սկսի։

Յիշեալ յանձնախորհրդին անկախ տելի իշխանութեամբ հաստատութիւնն ու կազմութիւնը ներկայ արժեթղթոց միացման գլխաւոր և յատուկ պայմանը լինելով, կայսերական կառավարութեան կողմանէ սոյն յանձնախորհրդին հաստատութեան կազմութեան և արտօնութեանց մէջ որ և է փոփոխութիւն չպիտի կրնայ լինիլ։

Յօդ. 6. Յատկապէս որոշուած է որ ներկայ փոխառութիւնը կնքող փոխատուք իրենց ձեռքը պիտի ունենան առաջին կարգի դրաւ մը, որ ներկայ հրամանագրով յօդուտ իրենց տրամադրեալ ու նուիրագործեալ է, այնպէս որ օրինաւորապէս և անդառնալի կերպիւ իրենց ձեռքն ունին վերոյիշեալ դրաւները, հասոյթներն ու տուրքերն, զորս Օսմանեան կառավարութիւնը թողած է առանձնաշնորհութեամբ և բոլոր ուրիշ ներկայ անցեալ և ապագայ իրաւանց վրայ առաջնութեամբ։

Յօդ. 7. Օսմանեան կառավարութիւնը ներկայ փոխառութենէն դուրս յացած գումարներուն ամբողջը կամ մէկ մասը թղթադրամն ամբողջապէս շրջաբերութենէ վերցնելու պիտի դործածէ։

Յօդ. 8. Մանրամասնութեան կամ դործադրութեան վերաբերեալ երկրորդական պայմաններն յետոյ պիտի կարգադրին Բ. Դրան և պայմանադիր կողմերն համաձայնութեամբ։

Գ.

Վեհափառ Սուլթանին կառավարութիւնն, Օսմանեան պարտուց արժեթղթատեարց Անդլօ-Գաղղիական մասնախմբին լիազօր երեսփոխան Թ. Քվիլ կոմսին հետ համաձայնութեամբ հետևեալ կարգադրութիւնն ըրաւ։

1876 էն առաջ եղող Օսմ. Քոնսոլիտէ պարտուց այլ և այլ արժեթուղթերն այսօր Օսմ. կառավարութեան և վերոյիշեալ մասնախմբին միջև տեղի ունեցած համաձայնութեան համեմատ 5 0/0 նոր Քոնսոլիտէի վերածելով միացնելու հրամանագրին պատճառաւ, և այն հրամանագրին շարունակութիւն լինելու և զայն ամբողջացնելու համար, վերոյիշեալ պայմանագիրը կնքեցին։

Յօդ. 1. Վերոյիշեալ հրամանագրին 6րդ յօդուածին 'ի գործադրութիւն, Վեհ. Սուլթանին կառավարութիւնը վերոյիշեալ Անդլօ-Գաղղիական մասնախմբին բացառապէս պաշտօն կը յանձնէ հին Քոնսոլիտէ պարտուց արժեթուղթերը նոր արժեթղթոց վերածել և ներկայիս

յիշեալ մասնախորհրդին հարկ եղած իշխանութիւնները կուտայ, որպէս զի սոյն միացումն և վերածման գործողութիւն յաջող վախճանի մը հասցունէ՝ սովորական իրաւագիտութիւն ճանաչով։

Յօդ. 2. Յիշեալ մասնախորհուրդն հրատարակութեանց, արժէթղթոց շինութեան, գործակալաց, դրասենեկաց, դռնակներու, թղթակցութեանց, թղթատարութեանց ևն. ևն. ծախքերը, պիտի տայ, միով բանիւ արժէթուղթերը Կ. Պոլսոյ, Փարիզի, Լոնտրայի և Հռոմի հրապարակաց վրայ փոխանակելու համար մասնախորհուրդն հարկ եղած բոլոր ծախքերը պիտի վճարէ։

Վերոյիշեալ ծախքերը դոցելու համար իւր բովանդակ հատուցում պիտի ընդունի 5 0/0 քօնսօլիտէ արժէթղթոց քանակութիւն մը, որոյ գումարը, վերածման և միացման հրամանագրին թուականէն մինչև մէկ ամիս նոյն արժէթղթոց ունենալիք միջին գնոյն վրայ հաշուելով, հրապարակն հանուելիք նոր արժէթղթոց գումարին 100 ին 1 ին պիտի համապատասխանէ։

Յօդ. 3. Մասնախորհուրդը պիտի կընայ իւր ամբողջ իշխանութիւնը կամ՝ նոր մէկ մասը յանձնել պանքներու կամ գործակատարաց, որք պաշտօն պիտի ունենան վերածումը գործադրել Եւրոպոյ այլ և այլ հրապարակաց վրայ։

Յօդ. 4. Օսմանեան կառավարութիւնը տեսուչներ պիտի կարգէ ստորագրելու և նոր արժէթղթոց վաւերականութեան և վաճառելիութեան հարկ եղած կնիքները դարնելու համար։

Սոյն տեսուչները պաշտօն պիտի ունենան վերածութեան ցուցակները քննել և ստուգել. հին արժէթուղթերը պիտի ջնջեն, և Օսմանեան կառավարութեան հաշոյն պիտի կարգադրեն դրոշմի, արձանագրութեան և պաշտօնական այլ և այլ հրապարակաց ընդունելութեան օրինական ձևերն ու տուրքերն, որք հարկաւոր են նոր արժէթուղթերը Փարիզի, Լոնտրայի, Կ. Պոլսոյ և Հռոմի հրապարակաց վրայ վաճառելի ընելու համար։

Յօդ. 5. Ներկայ պայմանագրութիւնը վերջնական պիտի լինի և պիտի գործադրի՝ միացման և վերածման հրամանագիրը գործադրելի լինելէն անմիջապէս յետոյ։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(ՐԱՑԹԷՐ)

Լոնտրա 20 փետր.

Բարեյուսոյ հրուանդանէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ յունվար 24 ին 4000 Զուլուներ Իվին Վուա գընդապետին հրամանատարութեան ներքև գտնուող Անգլիական գունդին վրայ յարձակեր են։ Անգլիական զօրքն ա. նոնց յաղթեր է քիչ կորուստով, և ցիր ու ցան ըրեր է։ Վուա գնդապետն յետոյ Իվիրէքթի մէջ բանակակեդրոն հաստատեր է։ Զուլուներուն ռազմամթերքը պակսիլ կսկսի։

(ՀԱՎԱՍ)

Գահիրէ 18 փետր.

Զօրաց թիւը պակսեցնելու պատճառաւ արձակուած բազմաթիւ սպայք ցոյց մ'ըրին այսօր. Նուպար փաշան և Եվմըսիից նախարար Պ. Ուիլսըն Անգլիացին նախատեցին 'ի ներկայութեան Խտիվին։

Գահիրէ 19 փետր.

Երէկուան ցոյցին մէջ, Խտիվը նախատուեցաւ և Նուպար փաշան վիրաւորեցաւ։

Լոնտրա 19 փետր.

Գահիրէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Նուպար փաշան հրամանատարական տուեր է, որ ընդունուեր է։

Պէրլին 19 փետր.

Դերմանական երեսփոխանութիւնը գրեթէ միաձայնութեամբ մերժեց՝ կառավարութեան ըրած առաջարկութիւնն որով Ֆրիցսխէ և Հասէլման ընկերվարական երեսփոխանները դատաստանի ենթարկել կուզէր։

Բեղրսպուրկ 19 փետր.

Սժանս Ռիւս լրագիրը կըսէ թէ Ռումանիոյ և Ռուսիոյ միջև փոխանակուած բացատրութեանց վրայ, անհամաձայնութիւնը կարգադրուած է։

Փիլիպէ 19 փետր.

Առջի օր Զըրբանի մէջ Փիլիպէի կառավարիչն հետևեալ կարգապահական անօրինութիւններն ըրաւ իբր ներկայացուցիչ տեղական իշխանութեան։ Հետևակազօրաց դումարտակ մը պիտի տեղաւորի բնակչաց քով մինչև որ Ռուսական զօրքերն ետ քաշուին. Զըրբանի փոխ-կառավարիչն ուրիշ պաշտօնի պիտի կոչուի. խռովարարներէն 4 հոգի ձերբակալեցան և Փիլիպէ ղրկուելով անդ բանտարկեցան։

Երէկ, Զըրբանէն 20 հոգւով պատգամաւորութիւն մ'եկաւ սոյն բանտարկելոց արձակուրդը պահանջելու, բայց Փիլիպէի իշխանութիւնն ետ ղրկեց յիշեալ պատգամաւորութիւնն ապառնալով թէ պիտի ձերբակալուին եթէ շարունակեն արդարութեան ազատապէս գործադրութեանը հակառակիլ։

Ա. յս առաւօտ հասած հեռագիրք

Դահիրէ 20 փետր.

Կը հաւատան թէ Շէրիֆ փաշան Նուպար փաշային պիտի յաջորդէ իբրև արտաքին գործոց նախարար։ Պատերազմական գործոց նախարար Բաթիլ փաշան ալ հրաժարական տուաւ։

Լոնտրա 20 փետր.

Բարեյուսոյ հրուանդանէն եկած վերջին լուրեր կը ծանուցանեն թէ յունվարի 24ին Զուլուներու մէկ յարձակումն յետս մղուեր է։ Անկէց 'ի վեր Զուլուները կըհամախմբին. իսկ Անգլիական զօրքերը՝ ղրկուած օգնութեանց հասնելուն սպասելով՝ պաշտպանողականի վրայ կը կենան։

Բեղրսպուրկ 20 փետր.

Աղէքսանդր կայսրն այսօր վաւերացուց Թուրքս-ռուսական դաշնադրութիւնը։

Պուքրէշ 20 փետր.

Ռումանական կառավարութիւնը Պէրլինի դաշնադրութիւնն ստորագրող պետութեանց ծանոյց թէ Արապ-Թապիայի Ռումէնաց կողմէն գրաւման նպաստաւոր կերպիւ իրենց վերջնական որոշման սպասելով, կառավարութիւնն հրաման ըրած է որ յիշեալ ամրոցն առժամանակեայ կերպիւ պարպուի։

Փարիզ 20 փետր.

Օսմ. Քօնս. 12,47 1/2

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Կարնոյ, Տէրսիմի, Վանայ և Խարբերդի գաւառաց վիճակը քննելով ընդհանուր բարեկարգութիւններ հաստատելու համար Պրուսայի նախորդ կուսակալ Ղալիպ փաշան առաջին, և Պոլսոյ նախորդ անդամ Նուբարեան Բ. էֆէնտին երկրորդ տեսուչ անուանեցան լիազօր իշխանութեամբ։

Հալէպի և Տիարպէքիրի նահանգաց համար ալ Տրապիզոնի նախորդ կուսակալ Եուսուֆ փաշան առաջին, և Աւագաց ժողովին անդամ Գօսթանդի էֆէնտին երկրորդ տեսուչ անուանեցան։

Դարձեալ կայսերական հրամանաւ՝

Պէնկազիի նախորդ կառավարիչ Բէուֆ պէյ Միտիլլի կղզւոյն կառավարիչ անուանեցաւ.

——

Նոր փոխառութեան և պարտուց միացման պայմանագրութեանց կընքուելուն առթիւ՝ Վեհ. Սուլթանը դոհութեան և ուրախակցութեան նամակ մը ղրկեց Մեծ-Եպարքոս Բարձր. Խայրէտտին փաշային։

——

Բ. Դրան և Պ. Թօքվիլի միջև կընքուած պայմանագրութեանց համեմատ մաքսատան մէջ կաղմուելիք յանձնախմբին նախագահ անուանեցաւ մաքսատան վերատեսուչ Սապրի փաշան։ Պետական խորհրդոյ անդամ Միքայէլ Փորթուգալ էֆէնտին ալ անդամ անուանեցաւ նոյն յանձնախմբին.

——

Նէօլօղոս լրագիրը կը ծանուցանէ թէ Բ. Դուռը ձեռնհաս մարդոցմէ մասնախորհուրդ մը կազմեր է՝ թղթադրամին շրջաբերութենէ վերցուելուն եղանակին վրայ կանոնադրութիւն մը պատրաստելու համար, որ լրագրաց միջոցաւ պիտի հրատարակի։

——

Դատական նախարար Սայիտ փաշայի նախագահութեան ներքև գրասնուող յանձնախորհուրդը ներքին բարեկարգութեանց վերաբերեալ բազմաթիւ օրինաց ծրագրեր խմբագրած է, որք Օսմանեան աւագաց և երեսփոխանաց ժողովներուն ներկայացուելէ ետև՝ իբր վերջնական օրէնք գործադրիլ պիտի սկսին։

——

Բ. Դրան և Աւստրիական դեսպանատան միջև չորեքշաբթի օրուընէ սկսեալ վերստին բանակցութիւնք բացուեցան Նօվի-Պազարի խնդրոյն վրայ։

——

Մայրաքաղաքիս Գաղղիական դեսպանն իւր կառավարութենէն նոր հրահանգներ ստանալով՝ Հելլենական խնդրոյն համար վերստին միջնորդութիւն մ'ըրեր է Բ. Դրան քով։

——

Մէսէնճէր լրագիրը Վոսփորի ծովեզերեայ Բումէլի և Անատոլու Հիսարաց բերդերը քանդելու լուրը սուտ կը հանէ։

——

Կ'ըսուի թէ Բ. Դրան և Անգլիոյ միջև բանակցութիւնք տեղի կունենան դերեվաճառն արդիլելու նպատակաւ դաշնադրութիւն մը կնքելու համար։ Սոյն դաշնադրութեան տրամադրութեանց համեմատ՝ Թուրքիոյ և Անգլիոյ մարտանաւերն տրտօնութիւն պիտի ունենան կառաձելի նաւերը քննելու։

——

Վադրէթ լրագիրը կը ծանուցանէ թէ Կ. Պոլսոյ ժողովուրդը շնորհակալութեան ուղերձ մը կ'ստորագրէ Վեհ. Սուլթանին մատուցանելու համար։ Սոյն ուղերձին շարժառիթներն են՝ թղթադրամի բարձման որոշումը, պարտուց միացումը, հայի գնոյն տարբերութեան կառավարութենէն հատուցումն և Ռուսաց Բումէլիէն մեկնիլը։

——

Անգլիական դեսպանին բացակայութեան միջոցին, դեսպանատան առաջին քարտուղար Պ. Լոուսրտ Մէլէթ տեղապահութիւն պիտի ընէ երկրորդ կարգի դեսպանի աստիճանաւ։

——

Կիպրոս կղզւոյն Անգլիական իշխանութիւնն հեռագրով իմացուց մայրաքաղաքիս Անգլիական դեսպանատան, թէ Սև Ծովէն, Աղախու Ծովէն, Թուրքիոյ Եւրոպական ու Ասիական Ծովեզերքէն, Տրիպօլսէն, Գարատաղէն, Թունուզէն և Յունաստանէն եկող նաւերը Կիպրոսի նաւահանգիստներէն ոչ միոյն հետ հաղորդակցութիւն չպիտի կրնան ունենալ։

——

Մասրիսէն քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մարոքի մէջ անիշխանութիւն տիրել սկսեր է։ Փէսրվարի 4ին Ֆէսի մէջ յեղափոխութիւն մը ծագեր է, և քաղաքին կառավարութիւնն ստիպուեր է մեկիթ մ'ապաստանիլ։ Մարոքի Սուլթանը կաթուածահար եղեր է։

——

Մէսաժերի Մարիթիմ կոչուած Գաղղիական ընկերութեան շոգենաւները Մարսիլիայի նաւահանգստին մէջ 48 ժամ քառանթինա պիտի ըսպասեն՝ իրենց ուղևորութեան օրերն ալ քառանթինայի 7 օրերուն մէջ հաշուելով։

Ֆլորիօ ընկերութիւնը՝ Կ. Պոլսոյ և Պրինտիզիի միջև ուղղակի բանող շոգենաւերէն զատ՝ Թուրքիոյ և Յունաստանի նաւահանգիստները բանող իւր բոլոր շոգենաւերուն երթևեկութիւնը դադրեցուց Իտալական կառավարութեան հաստատած քառանթինային պատճառաւ։

Ֆրասինէ ընկերութիւնն ալ Օսմանեան ծովեզերքը բանող շոգենաւերուն երթևեկութիւնը դադրեցուց։

——

Կ'ըսուի թէ հասարակաց կառքերու կառապաններն իրենց համար քաղաքապետութեան կողմանէ որոշուած սակագինը չեն ընդունիր՝ մանաւանդ ոտնի օրերու համար։

——

Երեքշաբթի օրը Կ. Պոլիս եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ժանտարման Աժտերխանի գաւառին մէջ կատարելապէս դադրած է։

——

Այս առաւօտ հրատարակեալ պաշտօնական ազդ մը կը ծանուցանէ թէ Սիւէյշեան փաշային վարած հրամատարութեանց մէջ բազում սխալներ գործած լինելը դատաստանին մէջ ապացուցուած լինելով, զինուորական օրինաց տրամադրութեանց համեմատ որոշուած էր զայն աստիճանազուրկ ընելով զինուորական տումարներէն անունը ջնջել, բոլոր պատուանշաններն իրմէն ետ առնուլ և զինքն ալ ցկեանս աքսոր ղրկել։

Բայց երբ սոյն որոշումը Վեհ. Սուլթանին ներկայացաւ, Ն. Վեհափառութիւնն առջի երկու պատիժները վաւերացնելով, երրորդ պատիժն՝ այն է ցկեանս աքսորը՝ վեց տարուան աքսորի փոխարկեց, և հրաման ըրաւ որ Պաղտատ ղրկուի։ Հետևաբար, Սիւէյշման փաշան նախընթաց իրիկուն յատուկ պաշտօնական մ'ուղղակցութեամբ մայրաքաղաքիս ճանրայ հանուեցաւ։

Վանայ և Պայազիտի հրամանատար Ֆայիզ փաշան ալ ստիճանազուրկ լինելով՝ անունը զինուորական տումարէն ջնջուելու, պատուանշաններն առնուելու և վեց ամիս բանտարկուելու դատապարտուած էր. բայց Վեհ. Սուլթանը սոյն պատիժներուն առջի երկուքը հաստատելով երրորդն՝ այն է բանտարկութիւնը՝ այնչափ ժամանակ աքսորի փոխեց։

Յիշեալ Ֆայիզ փաշան քանի մ'օրէն Գօնեա պիտի ղրկուի։

——

Քէօրրիւլիւյէն փետր. 9 թուականաւ Քուռիէ Տ'Օրիան լրագրին ուղղեալ նամակ մը հետևեալ դէպքը կը պատմէ։

«Անցոյս 2 ին դիշերն 30 ի չափ գաղթականք քաղաքէս 10 վայրկեան հեռաւորութիւն ունեցող Սվէթիս Սիսաս անուն Պուլղար եկեղեցւոյն պատերէն ներս մտնելով՝ պահապանն ու իր կինը կապեցին, և եկեղեցւոյն դռները խորտակելով, ներսն ինչ որ կար կողոպտեցին. սուրբ անօթներ, խաչեր, Աւետարանի ճարմանդներ, աշտանակներ, վերջապէս բան մը չը թողուցին, բաւական էր որ սակիթ կամ

ուրծաթէ լինէր և կամ իրենք այնպէս կարծէին։

«Սոյն դողութիւնները կատարէլէ յետոյ, Քրիստոսի պատկերին և այլ պատկերաց աչքերը փորեցին իրենց դաշտաղանիներով։ Աւետարանին վրայ և Մկրտութեան աւազանին մէջ ալ պղծութիւններ ըրին։ Յետոյ դուրս ելան գնացին՝ պահապանն և կինը կապուած թողլով, զորս առաւօտուն քահանայն եկեղեցին երթալով՝ տեսաւ ու ազատեց։

«Տեղւոյն դայմագամը բոլորովին անհոգ վարուեցաւ այս գործին մէջ, և յանցաւորք անպատիժ մնային։ Եղած դանդատանաց դայմագամը պատասխանեց ըսելով թէ. «Ո՞վ կըսէ թէ դուք ձեր եկեղեցւոյն մէջ ոսկիէ ու արծաթէ բաներ ունէիք. և ո՞վ գիտէ, թերևս ձեր մարդիկն ըրած են այդ դողութիւնը, որպէս զի յետոյ մեր վրայ ձգեն։»

Ադրիանուպօլսէն մայրաքաղաքս եկած հեռագիրք, ինչպէս նաև Յունաց պատրիարքարանը դալով Յոյն լրագրաց հաղորդուած պաշտօնական տեղեկութիւնք հետևեալ ծանր իրողութիւնները կը ծանուցանեն։

Երեքշաբթի օրն Ադրիանուպօլսոյ մէջ 30–40ի չափ Պուլղարք, ընդ որս նաև կանայք, քաղաքին Յոյն Մեսյապօլտին տունն երթալով՝ զինքը տեսնել կուզեն, և երբ Մեսրապօլիտը դուրս կելնէ, կատաղի վայրագութեամբ մօրուքէն ու ոտքերէն բռնելով սանդուղներէն վար կը քաշքշեն և այնպէս փողոցը կը հանեն որպէս զի հրապարակ մը տանելով ըսպաննեն։ Նոյն միջոցին Ռուս զօրավար մը վրայ հասնելով սուրը կը քաշէ և Պուլղարները կը ցրուէ։ Իսկ Մեսրապօլիտը դէշ վիճակի մէջ տուն կը բերուի, բերանէն արիւն հոսելով և մարմինը քանի մը տեղերէն վիրաւորուած, որով կեանքը վտանգի մէջ է։ Այս եղելութիւնն Ադրիանուպօլիս նստող հիւպատոսաց կողմէն մայրաքաղաքիս դեսպանաց հաղորդուեցաւ։ Յունաց Պատրիարքարանն ալ յատուկ պաշտօնատարներ ղրկեց Ադրիանուպօլիս, յանցաւորաց պատժելը պահանջելու համար։

Կըսուի թէ Պուլղարաց այս վայրագութեան շարժառիթ եղեր է Մեսրապօլտին թուրքասիրութիւնն։ Ադրիանուպօլսոյ Պուլղարաց մէջ մեծ յուզումկայ։ Թուրքաց վերստին յիշեալ քաղաքը մտնելը չեն ուզեր. մինչև անգամ դիմադրութեան կը պատրաստուին, և արդէն քաղաքին շրջակայքերը քանի մը հազար Պուլղար հաւաքուեր են սոյն նպատակաւ։

ԱԶԳ

Բուլանիա, Կարին, Վան, Մուշ, Սեբաստիա և այլ տեղեր դանուող և լրագրոյս անցեալ տարեկանը դեռ չը վճարող յարգոյ բաժանորդաց կը ծանուցանենք, որ եթէ մինչև մեկ ամիս իրենց պարտքը չհատուցանեն, լրագրոյս յուշարկումը դադրեցնելու պիտի պարտաւորիմք։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

Երէկ իրիկուն դոցուեցաւ		13.30
Այս առաւօտ բացուեցաւ		13.21
կէս օրին		13,19
Բուռսլիի երկաթուղի	ֆր.	48
Թղթադրամ	լիր.	436

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 8 փետրվար

Ասիական Յունարի բաժ. Անգղ. լիր.		4.22
» փոխանակութեան	»	3,20
Կ. Պոլսոյ Պանքային	»	6 16
Փրկի Յունարի	»	5.15
Փոխ. 1863	Ֆր.	68
» 1865	»	80
» 1869	»	78
» 1872	»	24
» 1873	»	68
Թրամուայ	Օսմ. լիր.	1 80

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

9 Փետրվար

Անգղ. լիրա	դրչ.	109 20
Նաբօլէոն ոսկի	»	86 14
Խմրէսիալ Ռուս	»	89 12
Գերմանիոյ	»	51 10
Մէճիտիէի տարբերութիւն	»	7 22
Լինդնոյ	»	124
Գլինձ	»	183

Օսմ. կայսերական Պանքան այսօր 420 դրչ. դին որոշած է փոխանակութեան։

ԱԶԳԱՅԻՆ

Հալէպէն փետր. 6/18 Թուականաւ Պատրիարքարան եկած պաշտօնական հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բ. Դրան հեռագրական հրամանին հակառակ՝ Հալէպի մէջ բանտարկեալ Ուլնեցի ազգայինք չեն կրցած ցարդ ազատութիւն ստանալ, և կը դանդատի Հալէպի կուսակալին դէմ, որ Հայոց ազգին հակակիր լինելով՝ Ուլնիոյ խնդրոյն տարբեր դոյն կուտայ Բ. Դրան առջև, և այսպէս մինչև դարուն Ուլնիոյ Հայ ժողովուրդը ցիր ու ցան ընելու միջոցներ կը խորհի եղեր։

Զեմք դիտեր թէ այս կարևոր խնդիրներն ինչ ելք պիտի ունենան, և ո՞վ պիտի պաշտպանէ Բ. Դրան առջև ազգին շահերն ու իրաւունքները. վասն զի Ս. Պատրիարք հօր հրաժարականի խնդիրն անլոյծ կը մնայ դեռ, և վարչութիւնը չունենալով իւր նախագահն, որ Ազգին ու Բ. Դրան յարաբերութեանց միակ միջնորդն է, չկրնար ազգային խնդրոց համար Բ. Դրան հետ բանակցիլ։ Կը յուսամք որ Ազգային Ժողովն իւր այս աւուր նստին մէջ վարչական այս անկերպարան վիճակին վերջ տալու միջոցները կը խորհի, և այս ծանր պարագայից մէջ իւր հայրենասիրութեան ու իմաստութեան նոր փորձ մը կուտայ։

Մուշէն փետր. 9 Թուականաւ Պատրիարքարան եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մամբրէ եպիսկոպոս Վարչութեան հրամանին անսաստելով՝ չուզեր Պոլիս գալ և այս նպատակին հասնելու համար ժողովրդային յուզումներ և կուսակցութիւններ յարուցանել կը փորձէ Մշոյ մէջ։ Այսպիսի ժամանակ մը, յորում ազգն ամեն բանէ աւելի միութեան ու խաղաղութեան կը կարօտի իւր վերքերը դարմանելու համար, ոճրագործ մ'է նա՝ որ այսպէս անձնական դժուած շահերու համար ժողովուրդը կը պառակտէ ու կը յուզէ։ Այսպիսին արժանի է խստիւ պատժուելու յօրինակ այլոց։

Վանքերն ազգին լուսաւորութեան վառարաններ լինելու սահմանուած են. սակայն Մշոյ վանքը մինչև ցարդ վիճերու և կուիւներու կեդրոն կամ պարզապէս որջ մ'եղած է, ուր պորտաբոյծ և կէս վայրենի մարդիկ՝ վանականի դիմակով կը դարանին, և իրարու գլուխ խորտակելով ազգը կը կողոպտեն։ Կը կարծեմք թէ Ազգ. Վարչութիւնն հայրենասիրական գործ մը կատարած կը լինի՝ ոչ միայն Մամբրէ եպիսկոպոսն հեռացնելով Մշոյ վանքէն, այլ նաև վանելով բոլոր այն անպիտան, տգէտ, խռովայոյզ և շահամոլ միաբաններն, որք անդ միաբանած են ոչ թէ ազգին ծառայելու, վասն զի անկարող են, այլ չարիք գործելու համար։ Փափաքելի է որ վանօրէից խորհուրդն՝ իւր ուշադրութիւնն ընդհանրապէս բոլոր վանօրէից վիճակին վրայ դարձնելով՝ յատուկ քննիչներ յուղարկէ դաւառները, վանքերուն վիճակը մանրամասնաբար ստուգէ, և դանոնք բարեկարգելու, պորտաբոյծ միաբաններու ճիրաններէն ազատելու և վերջապէս ազգին օգտակար ընծայելու միջոցները տնօրինէ՝ յատուկ ծրագրի մը համեմատ։ Այս տողերը գրած ժամանակ կը յիշեմք թէ բաւական ժամանակէ 'ի վեր ոչ վանօրէից խորհուրդ կայ և ոչ Ուսումնական խորհուրդ, և Վարչութեան ներկայ ընթացքը դիտելով՝ դժուարին է մեզ դուշակել թէ քաղաքական ինչ ուղղութիւն պիտի ունենայ իւր այս երկու աջակից ճիւղերը կազմելու։

'Ի Նպաստ Ազգ. Ս. Փրկչի Հիւանդանոցին չորեքշաբթի դիշեր տրուած մեծ պարահանդէսն, ինչպէս որ կ'ապասուէր, իւր նախորդներէն աւելի շքեղութեամբ կատարուեցաւ։

Կը յիշեն ընթերցողք թէ ասկէ առաջ 'Ի Նպաստ Արարատեան և Դըպրոցասիրաց ընկերութեանց տրուած պարահանդէսք՝ Դաղղիոյ և Անդղիոյ վսեմ. դեսպանաց հովանաւորութեան ներքև դրուած էին։ Վերջին պարահանդէսն՝ այն տեսակ հովանաւոր մը չունենալով, Ս. Փրկչի Հիւանդանոցին հիմնադիր և ազգային մեծ բարերար Պէղճեան Յարութիւն ամիրային բնական մեծութեամբ պատկերը դրուած էր Թատերասրահին մոտ կողմի մեծ օթեակին վրայ, որով այս ազգային բարեգործական մեծ հանդէսը Պէղճեանի անմահ յիշատակին հովանաւորութեան ներքև դրուած կը համարուէր։

Կարդադիր մասնախմբին հանճարեղ տնօրէնութեանց շնորհիւ՝ Հանդէսը կատարեալ բարեկարգութեամբ և դմայլելի կանոնաւորութեամբ շարունակեց ժամ 4 ½ 2 էն մինչև լոյս՝ 'Ի դոհութիւն հազարէն աւելի հանդիսականաց, որք Հիսանդանոցի խղճալեաց մխիթարութեան համար նուիրած լումաներնուն փոխարէն ղգացած բարոյական բերկրութեան վրայ՝ քաղցրաղուարթ դիշեր մ'անցուցած լինելու հաճոյքն ալ աւելցած կը տեսնէին։

Գոյացած հասոյթն հազար լիրայէն աւելի կը կարծուի։

Բերկրութեամբ կ'իմանամք թէ Ակնայ Ապուչէխ գիւղէն Կ. Պոլիս գտնուող ուսումնասէր Հայ երիտասարդք յիշեալ գիւղին մէջ աղջկանց վարժարան մը բանալու նպատակաւ ընկերութիւն մը կազմեր են (Վարագայ–Սանուց) անուամբ, և եռանդուն ջանիւ իրենց ազգօգուտ խորհուրդն յառաջ տանելու կաշխատին։ Զմտնամք յիշել, որ այդ բարեխորհուրդ երիտասարդաց նախնիքը Կ. Պոլսոյ մէջ մեծամեծ օգնութիւններ տուած են եկեղեցեաց և դպրատանց շինութեան. հետևաբար Կ. Պոլսեցիք ալ պարտաւոր են նիւթապէս և բարոյապէս ձեռնտու լինիլ Ապուչէխցի երիտասարդաց բարենպատակ ձեռնարկութեան։

Ղալաթիա 6 փետր. 1879

. . . Խմբագիր.

Կը խնդրեմք որ շնորհ ընէք, հետևեալ ցուցակը Ձեզ ղրկուած ըլլալով առ'ի հրատարակութիւն, Ձեր պատուական թերթին մէջ հիւրընկալել և ընդունիլ մեր անկեղծ շնորհակալիքը։

ՑՈՒՑԱԿ

Եէրպոսի Դէլ Արարատեան ընկերութեան բաժանորդ էրուոլանոյց

1878 ապրիլ 1 էն ցվերջ դեկտ. 1878

Մեծապատիւ էֆէնտիք	Ղրչ Եգիպտ.
Ն. Վ. Նուպարեան	115 50
Պօղոս Կարապետեան	248
Տիկին Վ. Պ. Կարապետեան	80
Կարապետ Պ. Միքայէլեան	32
Յովհաննէս Նախնուխ	16
Նշան Գալֆեան	16
Կարապետ Լազեան	40
Յարութիւն Ս. Պօղոսեան	16
Կարապետ Պ. Շէրիմճեան	40
Տիկին Կ. Պ. Շէրիմճեան	24
Խաչատուր Յարութիւնեան	40
Թորոս Խաչատուրեան	24
Մինաս Եաղուպեան	32
Եղբարք Եաղուպեանք	16
Սարգիս Մելիքեան	24
Արտաշէս Պ. Կարապետեան	24
Տիգրան Մկրտիչեան	20
Կարապետ Աստուածատուրեան	16
Սարգիս Շամլեան	16
Եղբարք Զալեան	40
Եղիա Եուսուֆեան	16
Գումար ղրչ Եգիպտ.	895 50
Նուազ ծախք փոխանակագրի և թղթատարի	18
ղրչ Եգիպտ.	877 50

Օսմանեան ոսկին 87,75 Եգիպտական ղուրուշէն հաշուելով, կընէ ճիշդ (10) տասը Օսմանեան ոսկի, զոր ընդունեցանք Քրէտի Լիոնէյէն։

Ընկերութիւնը թէպէտ և իւր տարեկան տեղեկագրին մէջ սովորութիւն ունի արդէն ամենայն նուիրատուաց անունները իրենց նուէրին քանակութեամբը նշանակել, սակայն հեռաւոր ազգայնոց մեծագոյն վստահութիւն ներշնչելու համար հարկ կը համարի երբեմն օրագրոց մէջ նաև ցուցակներ հրատարակել։ Այս առթիւ նուիրական պարտք կը համարիմք մեր երախտագիտական զգացումներս յայտնել Մեծապատիւ Կարապետ էֆէնտի Շէրիմճեանի, որ բարեհաճեցաւ ազգասիրաբար ընկերութեանս ներկայացուցիչն ըլլալու պաշտօնը ստանձնել Եգիպտոսի մէջ և իւր աշխատանաց երախայրիքն այս անգամուն համար ղրկել մեզ 10—տասը Օսմանեան ոսկի, ինչպէս վերը յիշեցինք։ Շնորհակալ եմք մեր Եգիպտաբնակ ազգայնոց, որ իրենց նուիրատուութեամբ քաջալեր կը հանդիսանան Արարատեան ընկերութեան, և տարակոյս չկայ թէ առ յապագայն որչափ աւելի իրենց նուէրներով և բարի յորդորներով օժանդակեն մեզ, ընկերութիւնս ալ նոյնչափ փութով և յաջողութեամբ դաստիարակութեան գործն 'ի դլուխ հանելու չպիտի դանդաղի, որ այսօր համայն ազգայնոց ուշադրութեան առարկայ եղած է։

Ի դիմաց Արարատեան ընկ.

Գործադիր ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ

Աբէլեար Աբէլեան Յակոբ Ամիրեան

ԻԼԱՆ

Նիզամիյէ Պարաճխանէ անպարքն տա իմալ օլունմագլա պուլունան մուհիմմաթը սարաճիյէ իչուն միւպայեա օլունաճագ գըրդ այթը դալէմ տէօքմէ թայրմայրնան թարիխի դարարտան իթիպարէն տօղոան պէշ սէնէսի շուպաթը նիհայէթինէ դատար հէր հանկը նէվլէրինտէն լուղումի օլուր տա թալիպ օլունուր իսէ, լուղումի մըդտարլարը թէսլիմ օլունմագ վէ մագպուզ սէնէտլէրինին վիրուտիյլէ մուամէլէսինին խիթամնտա սիմ մէճիտիյէ երկիրմի ղրուշ հիսապիյլէ էօհամը հէման իթա գըլընմադշարթլարը իլէ միւնաքասայէ գօնուլմուշ վէ ֆիյաթը մալիւմէ իլէ թալիպի էօհտէսինտէ օլուպ շուպաթը բուլմինին օն իքինճի բաղար իրթէսի կիւնիւ թէքրար պիլ միւնաքասա գաբարը գամիսլինին իճրասը մուգարրէր պո լունմուշ օլմաղլա, իմալ վէ իթասընա թալիպ օլանլարըն եէվմի մէղքիւրտէ Տարի Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

8 շուպաթ 1878

Պաղը Սէրասքէրի

ԾՐԱՆՈՒՅՑՈՒՄ,

ՏԱՄԱՏԵԱՆ ՁՈՒԼԱՐԱՆ

Օրուան թաշու թիւ 465

Հայ, Տաճիկ և Եւրոպացի տպագրական տառեր իրենց ամեն տեսակներով կը գտնուին պատրաստ խիստ արժան գիներով։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ

ՑՕՐԻՆԵՑ Գ. ՄՍԵՐԵԱՆ

Ի պէտս ազգային վարժարանաց

Իզմիր տպագրութիւն Գ. Մսերեան

Ամեն հայ գրավաճառաց քով կը գտնուի։ Գին 90 սանթիմ։

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ցօրինեց Մ. Մամուրեան

Բազմահմուտ Մամուրեան էֆէնտիի սոյն 140 երեսէ բաղկացեալ նոր գործը, որ իւր կատարելութեամբը կը յուսանք թէ մուտ պիտի գտնէ բոլոր ազգային վարժարանաց մէջ, Իզմիրի Տէտէեան տպարանէն հասած ըլլալով, կը ծախուի Եէնի-Ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 1 ֆրանք։

ԿԻՑԼՕՄ ԹԷԼԼ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ

Թարգմանեաց Գազղիերէնէ

Մ. Ա. Կ-ԼԼՊԷԱՆ

Անդամ քարտուղարաց դիւանին արտաքին գործոց պաշտօնատան որ 'ի Բ. Դուռն

Շիլլէր Գերմանացի հռչակաւոր հեղինակին ընտիր գործերէն մին և զոյգ սոյն պրէրգուութիւնը մէկ հինգնոց թղթադրամի կը վաճառուի վ. Յ. Մարգարեանի գրատունը Մէրճան չարշը թիւ 57 և ամեն գրավաճառաց քով։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Թարգմանեալ 'ի Գազղիականէն

1876—77 ի Արևելեան պատերազմին պատմութիւնը՝ զոր Գազղիացի նշանաւոր զօրապետ Ս. Լրֆօռ անկողմնակալ ոգւով և ճշգրիտ մանրամասնութեամբ գրած է, թերթ առ թերթ պիտի հրատարակուի Հայերէն լեզուաւ; մեծադիր և ուրթ երեսով, մաքուր թուղթի վրայ, իւրաքանչիւր թերթն երկու ընտիր պատկերներով։

Բաղդը է մեզ յուսալ որ մէն մի ազգային նոյն ազգալի պատերազմին անցիցը վրայ ունեցած հետաքրքրութիւնը յագեցնելու համար՝ կը փութայ իւր սիրալիր ընդունելութեամբը պատուել Թարգմանչին այս ձեռնարկը՝ որոյ համար ամեն խնամք ի գործ պիտի դրուին,

կը գտնուի Ուղուն չարշը Ցրէնկեան գրատունն և ուրիշ Հայ գրավաճառաց քով։

Գին թերթին 1 դրշ արծաթ դրամ։

ԺՕԶԷՖ ՊՈՆՍԱՄՕ

Թարգմանեց Կարապետ Եղմանեան

Ազէքսանդր Տիւմա Գազղիացի մեծանուն վիպասանին գրչէն ելած սոյն գործին ուրթերորդ՝ այն է վերջին հատորն ալ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն 'ի լոյս ընծայուելով, Պօլիս հասած է։ Այս գեղեցիկ վէպին մէջ, ուր Լուի ԺԵի կեանքը, վարքն ու վախճանը նկարագրուած են, հետզհետէ կը ներկայանան Վոլթէռ և Ռուսօ՝ անցեալ դարուն այն երկու մեծ մտադիկը, թաքուն դիտութիւններ կը յայտնուին, Ֆրանսիոյ օթեակներն օտարին առջև կը բացուին, վերջապէս ամեն կարդի և հասակի մարդ իւր սիրած նիւթը հոն կը գտնէ, և այլն։

կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆր. 25 սանթիմ։

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՓԵՏՐՎԱՐ 1 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՓԵՏՐՎԱՐ 28

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ		Եւրոպական Եղանակ	Թիւ
1	45	Եէնիմահալլէն Մէզարպ· Պէյիւքտէրէ, Թարապիա, Եէնիքէյ, Սթէնիա, Էմիրկ·Պոյաճ. Ը· Հիսար, Պէպէք։	32
2	30	Եէնիմ· Մէզարպ · Պէյիւքտ· Թարապիա, Եէնիք· Էմիրկ· Ը· Հիսար, Պէպէք։	20
3	30	Եէնիմահալլէն Մէզարպ· Պէյիւքտ · Թարապիա, Եէնիք· Սթէն. Էմիրկ· Պոյաճ. Ը· Հիսար, Պէպէք, Արնավ· Գուրուչ· Օրթաք· Պէշիկ։	17
5		Մէզար, Պէյիւքտ· Թարպ· Եէնիք· Էմիրկ· Ը· Հիսար, Պէպէք, Արնավ · Գուրուչ· Օրթաք · Պէշիկ ·	32
6	30	Եէնիմահալլէն Պէյիւքտ· Թարապիա, Պէյքօզ, Եէնիքէյ, Էմիրկ· Գանլըճա, Ը· և Ա· Հիսար, Գանտիլի, Արնավ· Զէնկ· Պէյլէր· Օրթաքէյ, Գուզկ· Պէշիկթաշ, Իսկիւսար։	2
8		Ը· և Ա· Գավազէն Եէնիմահ· Մէզար· Պէյիւք· Թարապիա, Պէյքօզ, Եէնիք· Էմիրկէն, Պոյաճ· Ը· Հիսար, Պէպէք, Արնավ· Գուրուչ· Օրթաքէյ, Պէշիկթաշ։	20
9	45	Մէզարպուրնուէն Պէյիւքտ· Թարապիա, Եէնիքէյ, Էմիրկէն, Ը· Հիսար, Արնավ· Օրթաքէյ, Պէշիկթաշ։	22

Աբոնոյոտ էնէրէ

1	45	Արնավուտքէյէն, Գուրուչ· Օրթաք· Պէշիկթաշ։	22
2	15	Արնավուտքէյէն, Գուրուչ · Օրթաք · Պէշիկթաշ։	25
2	45	Պէպէք. Արնավ· Գուրուչ· Օրթաք· Պէշիկթաշ, Գապաթաշ։	28
3	15	Արնավ · Գուր· Օրթաք· Պէշիկ· Գապաթաշ։ (Ուրբաթ օրերը ժամ 4 ին)։	22
4		Արնավ· Գուրուչ· Օրթաք· Պէշիկ· Գապաթաշ։ (Բացի ուրբաթէ)։	21
10	15	Արնավուտքէյէն ուղղակի կամուրջ։	21
11		» » »	28

Ասիական էնէրէ

1	45	Պէյքօզ, Բաշապ· Գանլըճա, Ա· Հիսար, Գանթիլի, Վանիքէյ, Զէնկէյքէյ, Պէյլէրպէյ, Գուզկ · (Փեար· 15էն ժամ 1 1/2ին)։	21
1	45	Արնավ· Վանիքէյ, Զէնկէյ· Պէյլէր· Գուզկ· Գապ։ (Փեար· 15էն ժամ 1 1/2ին)։	2
2		Ը· և Ա· Գավազէն Մէզար· Պէյիւքտ· Թար· Պէյքօզ, Բաշպ· Գանլ· Ա· Հիսար, Գանտ· Վանիք· Զէնկէյ· Պէյլէր· Գուզկ։ (Փեար· 15էն ժամ 1 3/4ին)։	33
3	30	Պէյիւքտ· Պէյքօզ, Բաշապ· Գանլ· Ա· Հիսար, Գանտ· Վանիք Զէնկ· Պէյլ· Գուզկ· Գապաթաշ։	34
8	45	Պէյիքտ· Պէյքօզ, Բաշապ· Գանլըճա, Ա· Հիսար, Գանտ· Վանիք· Զէնկէյ· Պէյլէրպէյ, Գուզկ· Իսկ·	25

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՆԻՆԵՐԸ

Եւրոպական Եղանակ

2	45	Գապ· Իսկ· Պէշիկ· Գուզկ· Օրթ· Պէյլ· Զէնկ· Արնավ· Գանտ· Ա· և Ը· Հիսար, Գանլ· Էմիրկէն, Եէնիք· Պէյքօզ, Թարապ· Պէյիք· Եէնիմահ։	2
3	30	Պէշիքթ· Օրթաք· Արնավ· Ը· Հիսար, Էմիրկ· Եէնիք· Թարապ· Մէզար·	32
5		Պէշիկ · Օրթաք · Արնավ · Պէպէք Ը· Հիսար, Պոյաճ· Եէնիք· Պէյքօզ, Թարապ· Պէյիքտէրէ, Մէզարպ· Ը· և Ա· Գավազ։	20
6	30	Իսկ · Պէշիկ · Գուզկ · Օրթաք · Պէյլ· Զէնկ · Արնավ· Գանտ· Ը· Հիսար, Պոյաճ· Եէնիք· Թար· Պէյիք։	25
8		Պէշիկթաշ, Օրթաք· Արնավ· Ը· Հիսար, Էմիրկ· Եէնիք· Թարապ · Պէյիքտ · Մէզարպուրնու։	22
10		Արնավ· Պէպէք, Ը· Հիսար, Պոյաճ· Էմիրկ· Սթէն· Եէնիք· Թարպ Պէյիք Մէզար· Եէնիմահ։	32
10	40	Պէշիկ· Օրթաք Արնավ· Պէպէք, Ը· Հիսար, Էմիրկ· Սթէն Եէնիք· Թարապ· Պէյիքտ· Մէզարպ· Եէնիմ·	17
11	15	Պէպէք, Ը · Հիսար, Պոյաճ· Էմիրկ· Եէնիքէյ, Թարապիա, Պէյիքտ· Մէզարպ· Եէնիմահալլէ։	20

Ասիական էնէրէ

2	45	Ուղղակի Արնավուտքէյ։	22
9	30	Գապ· Պէշիկ· Օրթաք· Գուր· Արնավ·	21
10	15	Գապաթաշ, Պէշիկթաշ, Օրթաք· Գուր· Արնավ·	28
11	15	Գապաթ· Պէշիկ· Օրթաք· Գուրուչ· Արնավ։	25
11	45	Պէշիկթաշ, Օրթաք· Գուրուչ· Արնավ։	28
12		Պէշիկթաշ, Օրթաք· Գուրուչ· Արնավուտ։	2

Ասիական Եղանակ

3	15	Իսկ· Գուզ· Պէյլ· Զէնկ· Արնավ· (Բացի ուրբաթէ)։	21
9	45	Գուզկ· Պէյլէրպ· Զէնկ· Վանիք· Գանտ· Ա· Հիսար, Գանլ· Բաշապ· Պէյքօզ, Պէյիքտ· Մէզարպ· Ը· և Ա· Գավազ։	33
10	30	Գապաթ· Գուզկ· Պէյլ· Զէնկ · Վանիք· Գանտ · Ա · Հիսար, Գանլ· Բաշ· Պէյքօզ, Թարապ· Պէյիքտ·	34
11	10	Գուզկ · Պէյլ· Զէնկ· Վանիք· Գանտ· Ա · Հիսար, Գանլ· Բաշապ· Պէյքօզ։	21
11	40	Գապաթ· Գուզկ · Պէյլ· Զէնկ · Վանիք· Պէպէք։	22

Ամեն ուրբաթ առաւօտ ժամ 4ին կամուրջէն չոգենաւ մ'ելնելով իսկ· Գուզկ· Պէյլ· Զէնկէլ· Վանիք· Գանտ· Ա· Հիսար, Գանլ· Բաշապ· հանդիպելով Պէյքօզ պիտի երթայ, և ժամը 5 1/2ին Պէյքօզէն պիտի ելնէ և յիշեալ նաւամատոյցներն հանդիպելով կամուրջ պիտի վերադառնայ։

ԹՈՒՂԹ ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱԲԷԿԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ, ԱԶԳԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՒՈՒ ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առ պատուականաց պատուական

Տէր Նէրսէս Արքեպիսկոպոս Անոյ

Եւ Պատրիարք Օսմանեան Հայոց

Ամեն. Ներսէս Սրբազան Պատրիարքի հրամանաւ գրուած և Արամեան տպարանէն գեղեցիկ տպագրութեամբ 'ի լոյս ընծայուած 160 երեսէ բաղկացեալ գիրք մ'է, որուն մէջ Պատուարժան հեղինակը հմտութեամբ խօսած է ոչ միայն Հայոց աշխարհի, ազգի և եկեղեցւոյ պատմութեան վերայ, այլ և Հայոց հին ընկերականութեան և վաճառականութեան, նոյնպէս և Հայաստանի բնական դրից և Հայոց այժմեան բարբառներուն վրայ տրամաբանօրէն։

կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին մէկ մէճիտ արծաթ։

ԲԱՆԱԼԻ

ՀԱՅԵՐԷՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Գրեց Մ. Մամուրեան

Անհաւասիկ գեղեցիկ մէթոտ մը, որ Մամուրեան էֆէնտիի աշխատասիրութեամբ մուտ գտնելով մայրենի լեզուին ուսման մէջ, կառաջնորդէ աշակերտները չարագ իր լինելու, չըսպասելով որ անոնք քերականութեան տաղտկալի շրջանէն անցնին։

Այս գրքոյկը Զմիւռնիոյ Տէտէեան եղբարց տպարանէն 'ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 50 սանթիմ։

ՄԻՆԱՍ ՁԵՐԱԶ

ԹԷ Ի'ՆՉ ՇԱՀԵՑԱՆԷ ՊԷՐԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԷՆ

Հայ պատուիրակութեան քարտուղար—թարգման Պ. Մինաս Ձերազի սոյն հեղինակութեան առաջին տպագրութիւնն սպառած լինելով, երկրորդը հրատարակուած է յաւելուածով մը։

Ամեն Հայ գրավաճառաց քով կը գտնուի։ Գին 75 սանթիմ,

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

ՂԱԼԱԹԱ ՆՕՐՕ ԽԱՆ

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի՝ բաց 'ի կիրակի և ազգ օրերէ։

Բաժանորդագրութեան տեղն է Ղալաթիա Սանտրգճիլար Ճատտէսի թիւ 198, Նօրօ խան Մասիսի խմբագրատունը։ Իսկ գաւառաց մէջ հետևեալ հոգաբարձուաց գրասենեակները.

ԶՄԻՒՌՆԻԱ. Սահակեան էֆ. Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խորով » Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Սահակեան էֆ. Թանկէրեան.
ՌՈՏՈՍԹՕ. Արժ. Տ. Արիստակէս ա. ուաղ. քահանայ Ֆէսլեան.
ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ.
ՍԱՄՍՈՒՆ.
ՏՐԱՊԻԶՈՆ.
ԱՄԱՍԻԱ.
ՍԵԲԱՍՏԻԱ.
ԵՒԴՈԿԻԱ.
ԽԱՐԲԵՐԴ.
ԵՐԶՆԿԱ. Թադէոս էֆ. Բագրատունի.
ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ » Փոթիկեան.
ՎԱՆ.
ԲԵՐԻԱ. Սեղրակ » Խորոճեան.
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս էֆ. Թաշճեան.
ԵԴԵՍԻԱ.
ՄԱՐԱՇ.
ՖՕՌՇԱՆ. Ֆէրհատ աղա Ս. Ֆէրհատեան.
ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան.
ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս աղա Հէրքիմեան։